

2. Ժ.Ֆ. դարուն Եգիպտոսի փաղափական վիճակը եւ Հայերը .

Փաթիմեանք, Եգիպտոսի կայսրութեան տէրերը յառաջ եկան շիւս ըսուած կրօնական շարժումէ մը, եւ կը պատկանէին շիւս իսլամութեան. 909ին Ափրիկէի հիւսիս-արեւելքը կազմակերպուեցան եւ 969ին Փաթիմեան Մուխզի գորապետ Կոնստի առաջնորդութեամբ կը գրաւեն Եգիպտոսը եւ կը հիմնեն նոր մայրաքաղաքը՝ Գահիրէն ուր 973ին կը հաստատուի Մուխզը (* 975):

Փաթիմեան էլ Մուսթանսըր սուլթանին ժամանակէն սկսեալ սուլթանութիւնը կ'սկսի տկարանալ, այնպէս որ անոնց իշխանութեան միջոցը կը սահմանափակուի միայն Եգիպտոսի մէջ. մէկ դարու ժամանակամիջոցի մէջ Եգիպտոս փայլուն եւ ազդեցիկ դիրք մը կ'ունենայ, շնորհիւ այն հզօր եւ կարող հայ վզրուկներուն՝ որոնք Եգիպտոսի ժողովուրդը կը կառավարէին երկաթի բազուկներով. 1067-1138 շրջանին էր որ Փաթիմեան սուլթանները իրենց կառավարութեան ղեկը յանձնած էին Պասր ալ ձեւալի, Ալ Աֆսալ Շահնշահի, Շապակի, Ճափար Ալ Մուզաֆֆերի, Գորդիֆալի, Եակնաի, Վահրամի, Տերի եւ այլոց. ասոնք իսլամացած էին, բաց ի Վահրամէն որ քրիստոնեայ մնալով հանդերձ շատ կարող կառավարիչ մը եղած է Եգիպտոսի մէջ. ասոնք որքան որ իսլամացած էին, բայց եւ այնպէս նպաստաւոր եղանակաւ մը կը վարուէին հանդէպ Հայոց: Ասոնցմէ առաջին երկուքը մեծ ազդեցութիւն ունէին պետական գործերու մէջ, անձամբ կը վարէին բանակը եւ կը մտնէին պատերազմի մէջ. ինչպէս ժամանակներուն մէջ չէին մոռնար երկրագործութեան ու վաճառականութեան զարգացման գործը. մեր վերեւ թուած հայ պաշտօնատարներէն ոմանք ալ կարճ ժամանակի մը համար պաշտօն վարած են. իսկ Վահրամ ու անոր եղբայրը Վասակ մեծ գովեստներով կը յիշուին արաբ պատմագիրներու կողմէն: Եգիպտական պատմութեան համար յիշատակելի թուական մը պիտի մնայ հայ վզրուկներու իշխանութեան այդ ժամանակամիջոցը: Էլ Ասիս Փաթիմեան վերջին սուլթանը 1160 ին գահ բարձրացած էր. քըսան տարիէ աւելի կը պակսէր հայ վզրուկի մը հզօր ձեռքն ու ազդեցութիւնը կառավարելու երկիրը. հետզհետէ կը տկարանար սուլթանին իշխանութիւնը ու սարսած էր իր գահը. պալատին